ՔՈՉԱՐՅԱՆՆ ՕՁԱԼ Ա ՎԵՐՍԻ ՔՅԻՆ

ԼՂՀ

Լեռնային Ղարաբաղում, ինչպես տեղացիներն են ասում, երբեք ոչինչ չի կատարվում: Եթե այս միտքը շարքային ղարաբաղցուն պարզապես զվարճացնում է, ապա շարքային լրագրողին ուղղակի հանում է հունից, հատկապես, երբ իրադարձությունների պակասը սկսում է ազդել լրագրողական վաստակիդ վրա: Իսկ երբ ոչինչ չի կատարվում, ներքաղաքական կյանքն անցնում է այնպիսի անդորրի մեջ, որ դժվարությամբ ես տարբերություն գտնում իրար հաջորդող օրերի միջև: Բայց իրավիճակը կտրուկ փոխվում է այն պահից, երբ Ստեփանակերտ է մտնում հայաստանյան պետհամարանիշերով մեքենաների շարասյունը՝ զգաստացնելով տեղի իշխանություններին եւ ձանձրույթից փրկելով իրադարձություն որոնող լրագրողներին: Մարտի 31-ին իր ծննդավայր էր ժամանել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը՝ տիկնոջ՝ Բելլա Քոչարյանի հետ՝ իրենց համերկրացի գործընկեր ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հրավերով:

Արդյունքում՝ Ստեփանակերտում երկու օր է՝ իրարանցում է: Աննախադեպ քամիների թեմային փոխարինելու է եկել աննախադեպ խցանումների թեման, որը երեկ վարորդների հետաքրքրության կենտրոնում էր. նման բան վաղուց չէին տեսել: Մինչ վարորդներն սպասում էին, թե Քոչարյանը երբ պիտի անցնի, որպեսզի մեքենաները շարժվեն, ուղեւորները քննարկում էին, թե ով որտեղից է ճանաչում Քոչարյանին: Մի քանի հոգի նրան ճանաչում էին կարի ֆաբրիկայից, որտեղ նախագահը ժամանակին որպես «պարտօրգ» է աշխատել: Ու մինչ ղարաբաղցիները «գյալաջի» էին անում, Քոչարյանը հանդիպում էր ԼՂՀ նախագահի, այնուհետ՝ օրենսդիր եւ գործադիր մարմինների ղեկավարների հետ: Երախտագիտություն հայտնելով ՀՀ նախագահին՝ երկար տարիների համագործակցության, Արցախյան շարժման ընթացքում իր ներդրման համար՝ ԼՂՀ նախագահն էլ ՀՀ նախագահին պարգեւատրել է «Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով: Հանդիպման ընթացքում քննարկվել են Լեռնային Ղարաբաղի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրները եւ Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացին առնչվող հարցեր: Այնուհետեւ վարչապետ Արա Հարությունյանը ներկայացրել է վերջին ամիսներին կառավարության կողմից իրականացված աշխատանքները եւ ծանոթացրել հետագա ծրագրերին, որոնք վերաբերում են բնակարանաշինությանը, ենթակառուցվածքների վերականգնմանը, մարդկանց սոցիալական վիճակի բարելավմանը, ինչպես նաեւ գյուղատնտեսության եւ այլ ոլորտների զարգացմանը: ՀՀ նախագահն էլ՝ որպես ավագ եղբայր, խորհուրդ է տվել կազմել հստակ ծրագրեր, տեղադրել կառավարության կայք-էջում, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի ամեն պահի կարող է տեսնել, թե որ ոլորտում, երբ եւ ինչ է տեղի ունենալու: Նա նկատեց, որ նման փորձ Հայաստանում արդեն գոյություն ունի, որն իրեն արդարացրել է: Հանդիպումից հետո պատասխանելով «Ղարաբաղ Օփըն»(«Karabagh Open») թերթի լրագրողի հարցին, թե ո՞ր դեպքում Հայաստանը կճանաչի ԼՂՀ անկախությունը, որի մասին վերջերս հայտարարվել էր, Ռ. Քոչարյանը նշել է, որ «երկու տարբերակ կա՝ կամ անմիջապես ճանաչել, կամ միգուցե վերջնական ճանաչումը այս պահին փոխարինել պայմանագրի ստորագրմամբ՝ Հայաստանի եւ ԼՂՀ միջեւ պաշտպանության, ժողովրդին վերաբերող փոխադարձ աջակցության եւ ագրեսիայի պարագայում իմպերատիվ կերպով մասնակցության առումով»: «Նման պայմանագիրը, կարծում եմ՝ կանխարգելիչ դեր կունենա ռազմատենչ հայտարարությունները կանխելու համար»,- ավելացրել է նա:

Պաշտոնական միջոցառումներից հետո երկու նախագահներն օրվա երկրորդ կեսին պահակախմբի ուղեկցությամբ զբոսնել են Ազատամարտիկների պողոտայում: Իսկ երեկոյան գործընկերներն ընթրել են «Ռոսիա» ռեստորանում, որը, ասում են՝ նախագահ Բակո Սահակյանին է պատկանում: Ղարաբաղցիները խոսում էին, որ կերած-խմածի հաշիվը կազմել է 1 մլն. 200 հազար դրամ: Մինչեւ ուշ երեկոյան ռեստորանը շրջապատված է երիտասարդ հատուկ պետհամարանիշեր կրող մեքենաներով: Գերհագեցած օրը Ռոբերտ Քոչարյանն ավարտել է իր պապական տանը՝ հենց այն տեղ էլ իջեւանելով:

Փոքր բնակավայրերին բնորոշ կերպով առավոտյան արդեն շարքային ստեփանակերտցիներ քաջածանոթ էին նախագահների սպասվող օրակարգին: Երեկվանից քաղաքում սկսել էին լուրեր պտտվել, թե առավոտյան Քոչարյանը պատրաստվում է որսի գնալ: Լավատեղյակ աղբյուրներից լուրը ճշտելուց հետո պարզվեց, որ բամբասանք չէ, այլ իմաստպես պլանավորված: Սակայն առավոտյան իմացանք, որ նախագահը մտքափոխվել է եւ որսի փոխարեն պատրաստվում է բացօթյա մի վայրում հաց ուտելու գնալ՝ «как старые, добрые времена»: Բայց մինչ նախագահը կմտքափոխվեր, քաղաքում արդեն սկսեցին անեկդոտներ շրջանառվել.«Ասում ա՝ Քոչարյանը օպոզիցիին անդամներին պերանի ընրալ ծմակը, ինքն էլ առավոտ էդ նույն ծմակը վերսի ա քինական»:

Լուսինե ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ
Արփի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ